ԱՅԲ
ավագ դպրոց

<< ԱՅԲ >>
ԳՐԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ

Becoming a lady

Karine Avalyan

We speak too much about things we have no idea about. For example, me, standing here, giving a speech about how to be a lady. Just kidding. **I know I'm a lady...** at least on my way to become a lady. You laugh because (in case they laugh) the society ruined the meaning of lady and your mind accepts the word "lady" as a female who uses sweet-smelling perfumes. Ahh, I almost forgot. She also distinguishes savoy cabbage from the green one.

In fact, ''becoming a lady" is a process, which begins with a turning point. In my story it's strange and significant enough to share with you. I was preparing for my piano concert and since the day was near, I was hoping that my teacher of physical education would let me skip his lesson. Even though I knew he would let me leave earlier, I approached him driven by decency. And...surprise! He said no. Simple as it is. I didn't have the intention to whine, dangle to persuade. I would rather slink quietly... out of the window. No one noticed, so my mission was done (I thought it was done). After all, I got my first slap on my face from my mom for rejecting the rejection. Honestly, my parents always picked the strangest situations to teach me something.

The relationship with my parents has always been complicated, especially when my mother was trying to fix me." Talk slowly, laugh softly, walk gently... BEHAVE LIKE A LADY. My childhood struggle has always been resisting the maternal attacks that were devoted to making me a "hamest axjik". It's obvious who won the game, right?

We often ride around Yerevan with my father at nights and I adore having discussions with him.

Once, I asked him.
-What makes a woman a lady.
- There are so many poems and books dedicated to mysterious nature of women. On the other hand, ladies seem simple to me. In famous movies the heroine breaks someone's heart. It's a trait of women, not ladies.

"Lady" is not the synonym of woman, likewise "gentleman" is not the synonym of man. You can choose to be more than that. Speaking quietly, smiling all the time, dressing elegantly, keeping fit... don't make you more than a human. To me, a vivid example of a lady is Princess Diana, who was largely a target of gossip and tabloid speculation, but never stopped to make significant contributions to charities, never behaved like the woman that her royal family and society expected her to be. She was her version of a lady. The thing is there are some kind of people who hike just to shout out with all their lungs, who laugh to the point of crying, who dance as if their bones don't exist. I hope it doesn't prevent them from being a lady.

Երիտասարդությունը Ձեզ տրվում է մեկ անգամ

Կարինե Ավալյան

Իմ հարևան Պողոսը յոթանասունն անց չապրած պապիկ է: Նրա հարևանությամբ գտնվելու այս տարիների ընթացքում հասցրել եմ հինգ անգամ բարևել իրեն, որից երկուսի ժամանակ ոչ միայն պատասխանել, այլ նաև նայել է դեմքիս: Բարեբախտաբար, Պողոս պապիկը լավ չի լսում (ների՛ր ինձ, Պողո՛ս պապ): Իմ՝ անպարկեշտության հասնող բարձր ռոքը իրեն չի անհանգստացրել երբեք, հետևաբար՝ ինքն էլ ռոքին: Նա հիշեցնում է անթերի պատի՝ բծախնդրորեն չխզբզած... բայց թողնենք որպես հարևան այս կատարյալ անձնավորությանը, որ նաև ԽՍՀՄ թունդ ֆանատիկ է ու անցնենք առաջ:

Իմ ծանոթներից մեկը, որը զարմանալիորոն Պողոս պապը չէ, ամբողջ տան կահույքը գնած օրվանից թողել է ցելոֆանապատ: Չմեկնաբանեմ՝ փոխարենը շարունակելով միտքս: Զգոնությունն ու վախը տարբեր բաներ են: Եթե դու առավոտյան արթանանում ես ու քո մտքով չի անցնում հեծանվով հասնել Ներքին Չարբախ կամ Ավան, չգիտեմ, դու որ ծայրից ես ավելի հեռու ապրում, եթե դու չես թքում քո կյանքի բոլոր ձախորդությունների երեսին ու զանգում հին ընկերներիդ, ուրեմն վախենում ես: Եթե երբևէ ոչ մեկին թթու խոսք չես ասել, բարձրաձայն չես գոչել կամ անտակտ ծիծաղել, ուրեմն չես ապրել: Բարի՛ գտնվիր, սիրելի՛ս և կատարի՛ր խնդրանքս: Քո՝ բուհ ընդունելության կամ ուղղակի 18-ը բոլորելու կամ մի կարգին աղջիկ ճարելու, չգիտեմ, մի կարևոր բանի կապակցությամբ պահված գինին բացի՛ր, լցրու Չեխոսլովակիայից բերված այն ժամանակվա թանկարժեք բաժակի մեջ ու խմի՛ր: Մինչև վերջ: Երբ հաջորդ օրը գա ու գինովցած չես լինի, զանգի՛ր բոլոր կորած ընկերներդ, ասա՛, որ առանց իրենց տանիքում հայտնված քամուց քշված ցելյուլոզե տոպրակից ոչնչով չէիր տարբերվի: Հիմա քո մտքով անցնում են բոլոր տականքները: Նրանց ևս զանգի՛ր: Շպրտի՛ր նրանց դեմքին, որ քեզ ցավեցրել են. այս ամենը նրա համար, որ դու մարդ ես՝ ունակ սիրելու և ատելու, գինովցած լինելու, շնորհակալ լինելու, ցավ զգալու և հասցնելու: Միայն այդպես մի՛ նստիր: «Ողջույններս» Պողոս պապիկի նման անպատասխան մի՛ թող: Համարձակություն ունեցիր ապրելու, խնդրու՛մ եմ

At the behest of the heart

Malvina Khachatryan

That was the autumn of 1841.Nature was as colourful as the soul of Adelaide Black. She had brown long wavy hair and big foxy brown eyes. She ran along the river to her love, Arthur Smith. He was sturdy tall for his age guy, with green eyes and deep brown hair. They were 8, but they did not think about age. Arthur and Adelaide dreamed together about their future, about their wedding... He promised he would come to her with a wonderful black horse and took her to go to live jointly.

One day as they walked under the murmur of an autumn leaf, Arthur sadly said: "Adelaide, my parents decided to take me to France with them for a better future". She was shocked and stood there for some seconds then started to cry. Arthur hugged her and spoke." You do not have to worry about that as I will come and see you every summer, I promise. I am going away at the end of the week. On Saturday at 10 A.M. be at our meeting place." She went home. Adelaide was crying all night, but Arthur's words smoothed her.

Days passed, it already was Saturday and 9.30 A.M. Adelaide wanted to go out when her mom interrupted: "Honey, please help me...".The girl decided to help mom quickly and then go. She had already finished the work and ran to the love of her life. On the way to him under the trees walked fraudulent Susan. She was in love with Arthur too. As soon as she noticed Adelaide, she became into other allegedly kind girls.

"Hey Susan, have you seen Arthur?"

Susan answered: "Yes, your Romeo just got into the carriage with his parents and went away."

The girl was shocked, because it was only 9:55. She did not even know his second name to find him in the future.

Summers passed, but Arthur did not come to her. 20 years got passed. Meanwhile, Susan did everything that everyone started making fun of her and calling Adelaide: "The girl, who got used by Arthur". So, after that, she left the small town and went to London. Adelaide became Elizabeth. She studied at Cambridge University, the faculty of biological sciences and became a young scientist. She was the only female scientist in biology at that time, so she was famous. All these years she was angry with Arthur who did not wait for her for only 5 minutes.

Over the years Arthur Smith lived difficulty. After the shift to France, his mom became pregnant and in a wake of birth his brother she died. 2 days later died his newborn

brother. Arthur's dad had heart disease, so he decided to work. He started playing the guitar in the streets. But Arthur was smart, he thought that they could not deal with that all time. He decided to rent teachers for educating himself. Years passed and Arthur became an incredibly famous chemist.

It was Scientist Gathering day. Elizabeth was in a bright red dress. Elizabeth was invited to dance, and she agreed. During the dance, Arthur entered the hall and see his old colleague Mister Simpson. Turned out that he was Elizabeth's new colleague. The dance ended and Elizabeth went to Mister Simpson. In Elizabeth, Arthur noticed Adelaide, with whom he had fallen in love in childhood. She noticed that too. It was as if they were so close, but at the same time so far.

Mister Simpson said: "Here, she is my wonderful colleague..."

Arthur did not let him finish: "Adelaide Black!"

"No, my dear friend, maybe you are confusing with another person. She is Elizabeth Williams! Meet, he is my old colleague Arthur Smith!"

"Nice to meet you!", she said.

The second dance started. Arthur did not dare to invite her dancing. But he saw a man who came to them to invite her too. He looked at her and at the behest of the heart finally do that. She agreed.

"Why did you change your name?"

"I do not think it is time to speak about that! Why did not you wait me?"
"What? I waited you from 9.30 to 11.30!"

"How dare you lie to me looking into my eyes? I came, but I saw Susan and she said you had already gone!"

"But I did not go! I waited you in our meeting place! Wait! Did you say Susan?"
"Yes! She told me that!"

"Hmm... If you remember she did not like you, because she was in love with me! So, I think she lied!"

Dance ended. But they still danced. They both did not believe they met, that they still love each other, even though so many things happened until they met.

Mister Simpson was surprised and sad: "What is going on? You two hide something from me."

“Mister Simpson, she is Adelaide.”, said Arthur.

“Adelaide or Elizabeth?”

“Both! She is that woman, with who I fell in love since my childhood.”

Little girl jumped out of bed and asked:

“What happened then mom?”

“Then they married and had such a beautiful girl, with big blue eyes.”

“Like me?

Թագաբացիլ

Նանե Ենգիբարյան

Աղմուկ: Ամենուր վազվզող մարդիկ: Դեղերի տհաճ հոտ... Ինչ-որ մի անկյունից լսվեց մեկի ծանր շնչառությունը:
-Ջո՛ւր, - հազիվ արտաբերեց հիվանդը: Հանկարծ...
Լռություն... Սպիտակ սենյակ... Դատարկություն...
-Ո՞ւր եմ ես: Էս ո՞ւր եմ, - ծերուկի գոռոցն ամենուրեք արձագանքեց:
Մի անկյունից նրան մոտեցավ փոքրի՛կ տձև <<գնդակ>>:
-Հանգստացեք, պապի ջան: Ամեն բան իր հերթին:
-Չէ՛, էս աշխարհը լրի՛վ գժվել ա: Ո՞վ ես դու, արա՛:
-Թագաբացիլ, կովիդ, վիրուս... Շատ անուններ ունեմ: Դիմե՛ք, ինչպես հարմար է:
-Ի՞նչ ա է խոսում, - քմծիծաղով ասաց ծերուկը, ապա զայրացած շարունակեց- էս հաստատ էտ հիվանդանոցի դեղերից ա: Մենակ փող, փող պոկեն: Մի շաբաթ ա ստեղ եմ. օրեցօր վիճակս վատանում ա: Հիմա էլ էս էր պակասում:
<<Գնդակի>> դեմքին ժպիտ հայտնվեց.
-Իսկ չեք հիշո՞ւմ, երբ ավտոբուս մտաք առանց դիմակի, ձեռքերը առանց ախտահանելու հաց կերաք: Էլի՞ բժիշկներն են մեղա...
-Տո դո՞ւ ով ես է, - ընդհատելով թագաբացիլին՝ գոռաց ծերուկը, - Ա՛խ, հազար ասեցի, հիվանք եք տնից դուրս մի՛ եկեք, է՛լի: Չէ՛, պիտի դուրս գան... պիտի բոլորի՛ս վարակեն, մեռնենք պրծնենք: Դիմակը ո՞ւմ ա պետք էս անխելքների երկրում:
Խորը հոգոց.
-Անհույս է, - հառաչեց վիրուսը:
-Անհույս է, - ասաց բժիշկը:

Խրամատի տղաները

Աիդա Ավետիսյան

-Ու՞ր հասար:
-Տղե՛րք, նայեք կուլմինացիան ա սա, ախր վերջն ա սա, ստեղ տոնայնությունը փոխվում ա, տեմպը արագանում ա, մեղեդին դառնում ա պոլիֆոնիկ, սա ԳՈՐԾ ա է՛: Հասկանում եք, չէ՞, տղե՛րք:
Խրամատում միայն Արան երաժշտություն գիտեր:
-Հա, Ա՛ր ջան, բա ոնց, ես ամեն ինչ հասկանում եմ,-միանգամից վրա բերեց Էդգարը,- մենակ մի բան չեմ հասկանում. էդ որ էդքան գրում-ջնջում, գրում-ջնջում ես, դո-ռե-մի-ֆա-սոլ-լյա-սի ես անում, վերջը էդ ստեղ ինչի՞ վրա ես նվագելու: Հա, էլի մեր Գոռը պինդ տղայա, բան չունեմ ասելու, բայց դե մեղք ա տղեն, ողնաշարի խնդիր ունի, չի ձգի էդքան:
-Հեսա որ Գոռը հելավ է՛,-հազիվ ծիծաղը զսպելով «սպառնաց» Գոռը ու անմիջապես փղձկաց, ինչպես բոլորը խրամատում:
-Բա հե՛լ, բա ու՞մ ես սպասում:
Թշնամի. 150 մետր:
Էդգարն ու Գոռը մանկության ընկերներ էին:
-Գնալու եմ տանը նվագեմ, Էդ ջան,- մեղմ տոնով պատասխանեց Արան՝ աչքերը նոտաներին հառած:
-Գնալու՞ ես որ:
Ու մի պահ բոլորը լռեցին: Երևի յուրաքանչյուրն ինքն իրեն մտքում այդ հարցը տվեց ու պատասխան չգտնելով լռեց: Անորոշություն. լռեց: Ցավ. լռեց: Սպասում. լռեց: Բայց ցանկացած լռություն ինչ-որ մի պահի կոտրել է հարկավոր: Այս լռության կոտրողը ոչ այլ ինչ էր, քան թշնամու փամփուշտը:

* * *

Խրամատը, որին տղաները երբեմն տուն էին անվանում, փորվել էր 11 հոգու կողմից, որ միասին պայմանավորվել էին կռվից հետո ֆուտբոլի թիմ դառնալ: Դարպասապահը Գոռն էր լինելու՝ պինդ տղան: Պինդ, որովհետև կյանքն ուրիշ ընտրություն չէր տվել նրան, որովհետև մնացած տղաները խրամատը տուն էին կոչում երբեմն, իսկ նա ծնվել էր խրամատից 250 մետր հեռավորության վրա ու այն ամենն ինչ կյանքը տվել էր նրան իր Սուրեն պապն ու այն մի բուռ հողն էր, որի համար զոհվել էին ծնողները: Պաշտպանությունում խաղալու էին Էդգարը, Նարեկը, Ավետն ու Դավիթը. ինչու՞ հենց իրենք. դե Էդգարը խաղալու էր, որովհետև ինքն էր էդպես ուզել, իսկ մնացած երեքը, որովհետև էլի Էդգարն էր էդպես ուզել:
-Ճիշտ ա ես կիսատ-պռատ բաներ չեմ սիրում, բայց դե հիմա նենց ա ստացվել, որ պետք ա ասեմ. Սաքոն, Մարատն ու Արտակը՝ կիսապաշտպան, վերջ:
Վերջ, երևի սա էլ էր հերիք, երևի հենց սա էլ պետք էր՝ Էդգարի կենսախինդ ձայնը, որով հնչեցված որոշումները հիմնավորման կարիք էլ չունեին:
Հարձակման դիրքում մնացին վերջին երեքը՝ Սամվել՝ աջից, Լևոնը՝ ձախից ու Արան՝ կենտրոնում:
-Վերջ, տղե՛րք, էս էլ մեր թիմը:
-Բա մարզիչ չունե՞նք,-հանկարծ ոգևորվեց Լևոնը: Նա հիմնականում չէր խոսում, բայց երբ խոսում էր միշտ ինչ-որ բան դեպի լավն էր փոխվում:

-Չէ՛, ստեղ կմարզվենք, կգնանք,- քթի տակ քմծիծաղ տվեց Ավետը:
-Բա անու՞ն:
Կրկին Լևոնն էր:
-Այ էդ մեկը լավ հարց էր,-ոգևորվեց Էդգարը,-անունը՝ «Խրամատի տղաները», զիլ ա չէ՞: Արս, բայց հիշի էլի «ԽՐԱՄԱՏԻ տղաները», ոչ թե «ՆՎԱԳԱԽՄԲԻ»:
Արան ժպտաց, ժպտաց մեղմ ու հանդարտ, ինչպես միշտ ասես նրան երբեք ոչ ոք ու ոչինչ չէր կարող հունից հանել, ասես միայն երաժշտությանն էր տրված Արային հուզելու մեծագույն պատիվը:
-Լավ, վերջ, այսօր այսքանը, գնանք չքնելու: Հա, մեկ էլ հիշացրեք վաղը ծանոթանանք:
Այսպես անցավ առաջին օրը խրամատում, որ փորել էր մի ողջ ֆուտբոլի թիմ: Այնտեղ հիմա 7ն են մնացել, իսկ պահեստայինի տարբերակ ուղղակի չկա:
* * *
-Լավ, ասենք ինչքան հարամ պետք ա էլի լինես,- շնչակտուր խոսում էր Էդգարը,- գոնե թողեիք էս տղեն երգը գրեր պրծներ:
-Ե-ՐԱ-ԺԸՇ-ՏՈՒԹ-ՅՈՒՆ,-ուղղեց Արան:
-Հա լավ, մի նեղվի, Գոռիս կասեմ բառեր կգրի, կդառնա երգ:
-Գոռիդ ասա ԱԹՍներին ուշադիր լինի:
-Տղե՛րք,-լսվեց Դավիթի ձայնը,- ասում եմ, կարող ա՞ զուտ պատահական կրակոց էր, թե չէ մի ժամ ա կանգնած ենք, ձեն-ձուն չկա:
-Ճիշտ ա, տղե՛րք, դուք իջեք, ես կմնամ կհսկեմ,-հնչեց Գոռի թավ ձայնը:
-ՈՒ՛խ, ընգերս ա է՛. բայց չէ:
-Տղե՛րք, հլը սուս, հրամանատարն ա,- տագնապած խոսեց Նարեկը:
«Տղաներ, հիմա ուշադիր ինձ եք լսում: Անհանգստանալու բան չկա, ամեն ինչ վերահսկողության տակ ա, ուղղակի կազմակերպվում եք ու զենքերն իջացնում, խրամատում մնացեք, չդիրքափոխվեք, մի քանի ժամից զանգելու եմ նահանջի հրաման տամ, պատրաստ եղեք: Ու հիշեք՝ հրաման չկատարողը թշնամուց վատ է»:
Ու յոթն էլ լսեցին մի բան, որին յոթն էլ հավասարապես չուզեցին ենթարկվել, բայց հրաման չկատարողը թշնամուց վատ է: Յոթն էլ իջեցրին զենքերը, ավելի ճիշտ հրամանն իջեցրեց նրանց զենքերն ու գամեց խրամատի անկյուններին, միացրեց լռությունն ու կրկին եկավ սպասումը: Ու աշխարհը մի պահ դադարեց շնչել, կյանքը քարացավ, երջանկությունը լցվեց անդունդը: Տղաները չէին կարողանում իրար երեսի նայել, ամեն մեկը գլուխը հենել էր զենքին ու թափառում էր իր ապրած-չապրածի արահետներով: Գոռն իր տունն էր հիշել, հիշել էր վերջին այցելությունը ծնողների գերեզման ու պապի խոսքերը, որ դաջվել էին սրտում ու էլ երբեք չէին ջնջվելու. «Դու նրանց պատճենն ես լրիվությամբ, մորդ պես ռոմանտիկ ու հորդ պես սրամիտ ես, քո հոգին երկնքում ճախրում է, սիրտդ՝ լեռներում ազատություն է գոռում»: Էդգարը մտքերով Սաթենիկի հետ էր՝ այն աղջկա, որ ամեն շաբաթ կակաչներ էր գնում իրենց խանութից. նա մեկին ուներ երկնքում, դրա համար էլ Էդգարին ուշադրություն չէր դարձնում, իսկ այդ հավատարմությունն նրան ավելի հմայիչ էր դարձնում Էդգարի աչքերում: Ավետը, չգիտես որտեղից թուղթ ու գրիչ էր գտել ու հորը նամակ էր գրում. «Պապ, ես սիրտս բերեցի էստեղ, որ էս լեռները չպղծվեն, որ էստեղ միշտ մեր սրտերի զարկը լսվի, պապ...»: Լևոնը զենքին էր նայում, երևի հիշել էր, թե ինչպես առաջին անգամ ռազմագիտության դասին 15 վայրկյանում քանդեց ու հավաքեց այն, երևի այն ժամանակ վստահ էր, որ այդ զենքը հետո պարզելու է վեր ու ասի «Հաղթել ենք», իսկ հիմա... իսկ հիմա շալակելու է այն որպես ծանր մի բեռ ու սեփական գոյությունը քարշ տա նահանջի ճանապարհով: Արտակն ու Սարգիսն էլ այնքան էին թափառել, որ հոգնությունից սկսել էին հողի վրա ինչ-որ բառեր գրել. «Մենք չենք ծախի հողը վախին»: Արան... իսկ ու՞ր է Արան:

Ահա, այնտեղ է՝ խրամատի ամենաթաքուն անկյունում նստած հայացքն անընդհատ տարուբերում է՝ մեկ նայում է տղաներին, մեկ նոտաներին ու այնպես է նայում ասես այս երկուսը պայքար են մղում նրա գլխում ու նրանցից մեկի համար հաղթանակն անխուսափելի է լինելու: Վերջին հայացքն ուղղում է նոտաներին, վերցնում զենքը, կանգնում է իր ողջ հասակով, զենքը պարզում վեր ու մի քանի վայրկյան շնչում բարձրության հոտը: Տղաներից ոչ ոք չի ստիպում նրան իջնել, որովհետև Արան հիմա հաղթում է, Արան հիմա նվաճում է իրենց բաժին հասած հաղթանակը: Մի քանի վայրկյան էլ ու լսվում է հաղթանակի երգը.

-Ես այսօր հաղթում եմ
Հաղթում եմ այսօր
Ու հավիտյան
Իսկ դուք...

Լսվում է պայթյունի ձայնը, ոչնչանում է մի ողջ խրամատ, յոթ կյանք, հազար կյանք, թշնամուն է անցնում Հադրութի ողջ շրջանը, իսկ այս ամենի վերևում, ամենավերևում, գրվում է Արայի անավարտ երգի վերջին տողն ու դառնում անջնջելի մղձավանջ թշնամու ականջներում. «Իսկ դուք այստեղ հանգիստ չեք ապրի»:

Բոլոր նրանց, որոնց մեղեդին մնաց անավարտ

Երկխոսություն

Աիդա Ավետիսյան

-Կարապի լիճն եմ, մեջտեղները կանգնած,- ծառերի տակով, իր հասակն անընդհատ «ցածրացնել-բարձրացնելով», քայլում էր Սուրենն ու խոսում հեռախոսով:
-Լավ չլսվեց, Սու՛ր, ախպե՛րս, մի քիչ բա՛րձր խոսա,- հեռախոսի մյուս կողմից բղավում էր Սուրենի ընկերը:
-Կարապի լիճը գիտե՞ս...հա, հա, արի՛, հասնես, զանգի՛ր, կառաջանամ, իրար հետ կգնանք ուզածդ տեղը:
-Ախպե՛րս, բայց րոպե չունեմ, զանգ թողեմ, հետ զանգի, էլի:
-Դու տես չկորես, մնացածը կերևա,- սիրալիր արտաբերեց Սուրենն ու անջատեց հեռախոսը:
Սուրենն ավելի քան վստահ էր, որ իր գյուղի այդ վաղեմի բարեկամը՝ Աշոտը, դեռ տաքսի չէր էլ նստել, ուստի մի քառասուն րոպե կարող էր ազատ ֆռֆռալ, մինչև Աշոտը կհասներ: Սկզբի տասը րոպեն ծախսեց խանութից գարեջուր գնելու և այն խմելու վրա, հետո հինգուկես րոպե նստարանին նստած՝ հիանում էր խոտերին նստած և գիրք կարդացող աղջկանով, մի պահ նույնիսկ ցանկացավ մոտենալ, բայց երբ հիշեց, որ դպրոցում գրականությունից ամենաբարձր գնահատականը երեքն էր՝ այն էլ ձգած, միանգամից հետ կանգնեց այդ որոշումից: Արդեն սկսել էր հոգնել, երբ վեր կացավ մի քիչ քայլելու և գլխապտույտի պատճառով ոտքը խփեց դաշնամուրին:
-Ա՛խ, դե ասա էս ջրերի կողքը ի՞նչ դաշնամուր, գոնե նորմալ, աշխատող մի բան լիներ, նստեի նվագեի, ջահելությունս հիշեի,- հառաչեց նա:
-Ըհըմ, ըհըմ,-լսվեց երիտասարդ ծերունու արձակած տարօրինակ մի ձայն:
-Լավ է՛, հոգնած եմ, ականջիս ձայներ են լսվում, -ինքն իրեն համոզում էր Սուրենը, երբ կրկին լսվեց նույն ձայնը:
-Ըհըմ, ըհըմ, Բաբաջանյան Առնո:
-Հը՞:
-Ինչ խոսք, չեմ ժխտում, ձայնս սովորականից տարբերվում է, պատճառը մրսածությունն է, էս վերջերս էստեղով շատ քամիներ են անցել, Երևանն էլ դե խառն է, չեմ ուզում անհանգստացնեմ, ասեմ՝ տաք շոր տվեք:
-Հա՛:
Սուրենը պապանձվել էր:
-Ա՛խ, ների՛ր, քո անունը չհարցրի,- բարությամբ ասաց Առնոն:
-Սու...Սուրիկ, չէ՛, Սուրեն, բայց Դուք կարող եք Արտավազդ դիմել կամ Մամիկոն, մի խոսքով՝ ոնց կամենաք:
-Սուրի՛կ, նստի՛ր կողքիս՝ դաշնամուրի մոտ,- ուսուցչի խստությամբ դիմեց Առնոն:
-Ինչի՞ համար:
-Նստի՛ր, կիմանաս: Սկսի՛ր:
-Ի՞նչը:
-Դու՞ չէիր նոր ասում. «...գոնե իսկական լիներ, նվագեինք»: Դե, ու՞մ ես սպասում, տղա՛ս:
Պապանձված Սուրենն ավելի պապանձվեց, երբ հասկացավ, որ ստեղնից ձայն է գալիս: Առանց որևէ բան ասելու/դե չէր էլ կարող, լեզուն ասես կուլ տված լիներ/ սկսեց նվագել իր ջահելության սիրելի երգը:

Բաբաջանյանը լուռ էր: Լուռ էր փողոցը: Սուրիկը չգիտեր ինչ ասել, բայց ոչինչ չասել էր չէր կարող. լռությունը կոտրող էր պետք:
-Ես գյուղացի տղա եմ, մեր գյուղի վարժարանից էն կողմ բան չեմ տեսել, ինձ խիստ աչքով մի՛ նայեք:
-Գիտես, Սուրիկ, ամեն օր այստեղ՝ այս անհարմար դիրքով նստած լինելն ինձ այնքան չի նեղում, որքան այն նվնվոցներն ու աղբը, որ երեք րոպեն մեկ սղոցում են ականջս: Ամեն օր, հիշելով «Իմ վարդագույն ընկերը», «Մեր սիրո երգը», «Գեղեցկության թագուհին», բայց առերեսվելով եսշատչգիտեմինչերին, երաժշտությունս պատկերացնում եմ մսաղացում մնացած կիսատ աղացված մսի տեղում, որն ուղղակի չեն թափում, որովհետև...ուղղակի չեն թափում: Բայց հիմա ուզում եմ ասել՝ պինդ պահեք արվեստը, որովհետև մի քանի րոպե առաջ համոզեցիր, որ այն դեռ կորած չէ ու...
-Ու ունեցածն էլ կորցնելը...
-Վերջին ստորությունն է, որ կարող ենք թույլ տալ ինքներս մեր հանդեպ,- Սուրենի մեջքի հետևում շշնջաց ոտքերը կորցրած Աշոտը՝ հրճվանքի արցունքն աչքերում:

When love lasts

- You will not achieve anything in this life, you are such a failure, you fail every...

It was a cold winter day. To forget at least for a moment about the quarrels at home and the insults against me, I went out into the street where I had never been before. There was silence in the city, and the streets were lit only by lanterns. But... I saw a light shining on the third floor of a building I did not know. I started to walk in the direction of that building. A girl was sitting by the window reading a book. I looked at her for a long time. My cold heart started to feel something I have never felt for the past 2 years. I went home. Everyone was asleep, well, I will go up calmly to my room and hopefully will not hear my parents' abusive words towards me. I could not sleep. I was thinking about that girl I saw today. Maybe it's absurd to talk about this, I need to sleep.

I woke up and immediately ran out of our house. Not our, my parents' house, I was not feeling "home" with them in that building. I didn't sleep last night, I was thinking about her, I needed to know her. After running for a while (I couldn't remember that building because of darkness) I finally found her house. She wasn't sitting by/at that window. Maybe she wasn't even at home at that moment. How could I be so stupid. Anyway, I took a stone and tried to hit the window. One. It did not hit the window. Tried second time. Failure again. Maybe my parents were right. I tried third time. Success! After a few seconds she looked from the window. I waved to her. She waved me back. I didn't know what to say, I didn't even believe that she might talk to me.

"Hi". That sounded awkward.

"Hey". She smiled to me. We started to talk about our life, family, our interests. I started to feel something towards her. We talked like this for a month. Sometimes home is a person. She is my home. She was the first person I really loved during those long, hard years. Of all the people I remember, she was the first to look me straight in the eyes as if I were important to her.

"Maybe we can go out for a walk. We have been talking to each other like this for a month, but I can't see you close, right beside me. Maybe we can..."

"I am sorry, I can't go out. My parents are strict and won't allow me to"

"I can talk to your parents. Come out just a couple of minutes. Please? "

"There's no need to do that. You will make everything worse."

"Uh, okay... Then see you tomorrow."

"See you."

I didn't really want to go home then. It was still 8pm so I still had 2 hours left before I must go home. I was thinking what to do then remembered that there was a football match that my friend was watching at that moment. I went to his home.

"Goal! I knew it."

"Yeah..."

"Why do you even need her?"

'I don't know, probably I love her..."

"You haven't even seen each other normally bro."

"Well, I know her personality and I saw her from her window..."

"Then if she can't go out because her parents won't allow, climb to her."

"What are you talking about?"

" To her balcony."

"That's a good idea. Thank you so much bro. I appreciate it!"

I bought roses for her, came to her house, and started climbing up to her window. It was hard. I didn't know why her parents wouldn't allow her to go out As she was a teenager and had a right to spend time with her friends. By thinking about this I didn't realize that I had already reached her window. I entered the window with a smile on my face.

"I wanted..." she was sitting in a wheelchair "to see you."

"You know, you're even more beautiful when closer."

I hugged her.

Algea

***

Slow dancing alone along to your voice,
Taking each step, no making a noise,
Up on the tiptoes marching our waltz,
To the pacing beat of your tender heart

Անկեղծ խոստովանություն

Լանա Մելիքյան

Վարագույրները բարձրանում են, բարձրախոսը միացված է: Կարմիր, երբեմն կանաչ, կապույտ, ինչու ոչ նարնջագույն ու վարդագույն, բայց առավելապես սև և սպիտակ. այս գույներով ներկված հանդիսատեսը նստած է հսկայական դահլիճում, որտեղ յուրաքանչյուր խոսակցության մեղեդի խառնվում է, հարվում ու ծնունդ տալիս երեգեհոնային բարձրագոչ մի աղմուկի: Բայց երրորդ անգամ հնչեցված զանգն ազդարարում է երեկոյի, բացառիկ անկեղծ խոստովանության երեկոյի ծնունդն ու միաժամանակ, այս ամենի ու իրենց հանդեպ անտարբերության պատճառով դահլիճում հայտնված մարդկանց աղմուկի մահը: Բեմի մեջտեղում կանգնած՝ ես զգում եմ ինձ վրա ընկնող լույսի՝ հետզհետե ծանրացող և զսպաշապիկ հագցնող գրկախառնությունը. չէ՞ որ այս խոստովանությունը պիտի լինի բարձրագոչ, պիտի լինի բացարձակ ու անվերապահ, չէ՞ որ ինձ այսքան մարդ է հետևում և վերջապես, չէ՞ որ սա անտարբեր ու վեհաշուք անկեղծության միակ ժամն է, ուր պիտի քանդվեն մարդկանց գաղտնիքները կապկպող վզախեղդ բոլոր շարֆերը: Ես գլուխս կախել եմ այս ծանրությունից և չեմ համարձակվում նայել հանդիսատեսի՝ անվերջ թվացող այդ շարքերին, հայացքս չեմ ուղղում մերթընդմերթ հնչող քմծիծաղի, հազի, ճռռոցի ու մյուս բոլոր ձայների ուղղությամբ: Բերանիցս հոսում են խոստովանանքի երկար, անվերջ թվացող շիթերը, ողողում դահլիճը, գրկում աթոռների ոտքերը, խաղում մի քանի գեղեցիկ օրիորդների վարսերի հետ: Ես, առանց դադարի ու առանց ընկրկելու, աչքերս չբարձրացնելով, պատմում եմ իմ ունեցած դաժան մտքերի, պատմում եմ մանկական ոչ այնքան անմեղ կատակների, իմ հոգում բանտարկված ատելության ու միայնության մասին, պատմում եմ, թե ինչպիսին եմ միայնակ սենյակում, թե ինչպիսին են իմ գիշերային մտքերը, թե քանիսին եմ խոցել, քանի անգամ եմ դիտավորությանը հագցրել անմեղության շապիկը, պատմում եմ անվերջ «թե»–երի մասին: Ես պարզապես ճզմեցի այն հաստլիկ, կանաչ թրթուրին, որ մի առավոտ հայտնվել էր մեր բակում, որ փորձում էր գնալ ու կորել ապահովության այն կանաչ օազիսներում, որ շուրջբոլորն էին ու նրանից հոսող դեղնավուն լուծույթում, որ մի բացարձակ երջանկություն ներարկեց ինձ, կարելի էր զգալ թիթեռ դառնալու երազանքը: Դա ճիշտ այնպիսի մի լուծույթ էր, որով հիմա լցված է այս դահլիճը:

Անկեղծ խոստովանություն

Լանա Մելիքյան

: Իմացավ մայրիկը, հետո հայրիկը, պապիկը, իմացան բակի երեխաները, իմացան հաստ կտորներով փաթաթված տատիկները, խանութի դեղնամազ վաճառողները, իմացան նարդի խաղացող հաստափոր տղամարդիկ: Իմացան բոլորը: Խեթ հայացքներ, խրատական խոսքեր, հեգնական ժպիտներ, բացահայտ շշուկներ, զգուշավոր հպումներ և ես՝ փոքրիկ, անօգնական ու կրկին փոքրիկ: Դա մի եթերային ատելություն էր, որ նրանք չհանդուրժեցին և ահա արդյունքը. չկան այդ տատիկները, չկան վաճառողներն ու հաստափոր մարդիկ, չկան իմ տիկնիկներն ու դրանց վրա սուրճ թափած դայակը, չկա նաև անվերջ հայհոյող պահակն ու կանաչ շրջազգեստով աղջիկը... ես խոստովանում եմ ու հաստատում, որ նրանց սպանելն ատելության պոռթկում չէր, այլ սիրո... պարզապես սիրում էի տիկնիկներս չափից շատ ու նաև կարմիրը նախընտրում եմ կանաչից և դեղնամազ լինելու կարիք չկա, որովհետև սևահերներին ես սիրում եմ առավել, կարևոր է նաև գեղեցիկ խոսելն ու մարզվելը, որովհետև հայհոյելն ու ճարպը պակաս սիրելի են ինձ համար: Պանդորայի արկղը բացվել է: Շիթերը հոսում են աչքերիցս, և նրանց թվում է, որ դրանք զղջման արցունքներ են, այնինչ խոստովանությունն այնքան շատ է, այնքան ազատատենչ, այնքան պրկված, որ հոսում են աչքերիցս և ողողում ամենը: Անկեղծությունն ու իմ վերաճող հանգստությունը թափվում են դահլիճի պռունկներից, ու այս խոստովանանքի յուրաքանչյուր դերակատար, դահլիճում իր մասին լսելով, խաղաղվում է: Մարդիկ սիրում են ցավի ու ատելության առարկա լինել, որպեսզի վեհերոտ մեծահոգությամբ սպասեն ու հետո լսեն խոստովանությունները, ինչպես հիմա իմը, որպեսզի թվացյալ ներողամտությունը վերածվի հոգևոր անհանգստությունը ցավազրկողի, հոգեճնշողի: Ես ավարտեցի. ժամանակագրական հերթականությամբ ամեն ինչ ասված է, գուցե նաև ներված: Հանդիսատեսը ծափահարում է բուռն, ավելի բուռն: Սա շարունակությունը լսելու ու զգալու անհագ պահանջն է: Ես գլխահակ լսում եմ, իսկ հսկայական դահլիճը հեղեղված է իմ կյանքի միակ, անկեղծ ու բացարձակ խոստովանության լուծույթով: Այսօր իմ հերթն էր, վաղը կլինի նրանցը, բայց ես հավանաբար չեմ նստի այս դահլիճում, որովհետև այս հեղուկը պահելու համար պատրաստած բոլոր սրվակներս ու պարկերս լցված են: Լռություն: Այս անկեղծության դարաշրջանն ավարտին հասցնելուց հետո ես իրավունք եմ վաստակել վերջապես բարձրացնելու աչքերս ու արժանանալու ամբոխի ներողամիտ հայացքին: Սենյակում լուռ է. ես տեսնում եմ հանդիպակաց պատի դատարկ ճերմակությունը, բայց ահա հազարոտնուկը բարձրանում է, իսկ թեյը վաղուց սառել է, քնաբերի հատիկները դրա կողքին են: Ամեն ինչ նույնն է իմ փոքրիկ սենյակում այնպես, ինչպես հավերժ է: Այլևս երբեք ես չեմ փակի իմ աչքերը, ես չեմ վերադառնա այդ աշխարհ, չեմ լսի այդ ծափերն ու չեմ զգա ծանրացող լույսի ու այդ հեղեղի ճնշումը: Պետք է սուրճ պատրաստել, քնաբերն աղբանամանում է: Հավերժ

The sunflower Field

This is a small piece of my childhood memory that I won't forget. It's like a small bit of burnt caramel in my mouth that just reminds me of the time when everything was much better. The story starts at my childhood farm where, I lived in a cozy house that was surrounded by long fields. I was 9 or 10 at that time. Life in my village was really lovely. I used to go to a local school and I even had a close friend. His name was Varo. We used to bike to the school and back every day on our bikes. They looked like they have been through a war, but we took care of them pretty well for 9-year-olds. It was a dazzling Friday and the weather was sunlit. Varo and I ran out of school and set on our bikes. Varo said,
-Hey! Wanna race? The winner gets a chocolate bar from Mrs Lusine's store.
-The one with the blue package?- I asked.
-Which one you would desire Mr prince.- said Varo with his teasing smile.
-Bet!- I yelled. I hated when he called me a prince for being more prudent than him, but I had to show Varo that I am a better racer than he is.
At first, I was the one leading but then Varo just speeded up and overtook me . I tried to catch up but my face turned red and my lungs were burning. "He is too fast," I thought. Varo suddenly turned the other way and we continued cycling on the wrong road. We then abruptly ran into a sunflower field.
-Woah! Be careful Varo.- I yelled.
But Varo didn't care. He was laughing like crazy and I started giggling too. The sunflower leaves were everywhere in the air. They were like fluffy little yellow clouds that were following us wherever we cycled. All of a sudden, Varo ran into a rock and fell and I fell on him. We started laughing and the small sunflower leaves like little chunks of gold started falling on our heads and our shoulders. We stood up and brushed the leaves from our shoulders and heads. We were all covered in mud and I had a small scratch on my leg. When Varo saw my scratch he jumped and asked if I was ok. I said yes because, although the scratch hurt, I didn't want to look like a little prince in front of Varo, so I acted like a brave boy. It took us 5 minutes to realize that we were in the middle of nowhere and everything we could see were the green sunflower stems and above our heads yellow sunflower heads with their black like little pearls seeds. It was sunset and the sunlight as a cloud of golden dust covered everything with its peachy yellow rich color. Varo and I laid down on the ground and started looking at how the sun was hiding behind the clouds and coloring them with its light. The light and warm September wind was blowing down the dust. The flowers started closing and we noticed how the moon showed up. It was getting dark. We started panicking.
-Where are we?- Asked Varo with a shaky voice.
-I don't know.- I answered, trying to hide the fear in my eyes.- We should get out.
- What if we get more lost? Let's wait till the morning so we can do something, it's dark right now.- answered Varo.
I agreed with his idea and we started waiting. We were laid down and we were looking at the night sky

The sunflower Field

Something you won't see in the city is the magnetic night sky covered with millions of stars that look like little diamonds and the moon that looks like a big pearl that was found under the ocean.
-Have you ever thought about how stars got there?- asked Varo.
-I don't know.- I answered.- Maybe some kind of a cosmic diamond factory blew up.
-Could be.- Said Varo.- Imagine us getting kidnapped by aliens.
-Stop!- I giggled.
-No, but really, imagine them taking us to their spaceship and eating our brains.- Varo made a scary, but funny face and I started laughing.
We spent the whole night talking and we didn't even notice how it was already sunrise. We got up and in a few hours, we finally found our way home. My parents were really scared but they were happy that I was ok. This was the best night of my life.

«ԱՅԲ» գրադարան տարեգիրք

2021-2022
Ուս տարի

Այբ դպրոց